Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

(Կ-874[1]-25.06.2024-ՊԱ-011)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 13-րդ հոդվածի 2-րդ պարբերության 1-ին նախադասությունում «123-131» թվերը փոխարինել «123-131.1» թվերով:

Հոդված 2. Օրենսգրքի 131-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ խմբագրությամբ 5.1-ին մասով.

«5.1. Ապրանքների առաքում իրականացնող հեծանիվ կամ մոպեդ վարող անձի կողմից հեծանիվը կամ մոպեդն առանց սաղավարտի կամ չկոճկված սաղավարտով վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթնապատիկի չափով:»,

2) 6-րդ մասում «առաջինից հինգերորդ» բառերը փոխարինել «1-5.1-ին» թվերով,

3) 6.1-ին մասում «1-5-րդ» թվերը փոխարինել «1-5.1-ին» թվերով:

Հոդված 3. Օրենսգրքի 10-րդ գլուխը լրացնել նոր 131.1-ին հոդվածով հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 131.1. Անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների երթևեկությանը ներկայացվող պահանջները խախտելը**

1. Անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների երթևեկությանը ներկայացվող պահանջները (կանոնները) խախտելը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված դեպքերի՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

2. Ապրանքների առաքում իրականացնող անձանց կողմից անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցն օգտագործելն առանց սաղավարտի կամ չկոճկված սաղավարտով՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթնապատիկի չափով:

3. Անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցները վարձակալությամբ տրամադրելու գործառույթ իրականացնող կազմակերպությունների (անձանց) և ֆիզիկական անձանց կողմից «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 24.4-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված պահանջը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ կազմակերպությունների (անձանց) նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանինապատիկի չափով, իսկ ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

4. Անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցով ուղևոր կամ բեռ տեղափոխելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

5. Անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցով այլ անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոց կամ միջոցներ տեղափոխելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ կազմակերպությունների (անձանց) նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանինապատիկի չափով, իսկ ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

Հոդված 4. Օրենսգրքի 264-րդ հոդվածի 4-րդ մասում «173» թվից առաջ լրացնել «131.1-ին հոդվածի 3-րդ մասով,» բառերը, իսկ նույն մասի «մինչև գործի քննությունը վերցնել» բառերից հետո լրացնել «անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցը,» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին, 287-րդ հոդվածի 2-րդ, 302-րդ հոդվածի 1-ին, 305-րդ հոդվածի 2-րդ և 307-րդ հոդվածի 3-րդ մասերում «131» թվից հետո համապատասխան գրելաձևով լրացնել «131.1» թիվը:

Հոդված 6. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ ամիս հետո, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածով լրացվող 131.1-ին հոդվածի 3-րդ մասի:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածով լրացվող 131.1-ին հոդվածի 3-րդ մասն ուժի մեջ է մտնում 2025 թվականի սեպտեմբերի 1-ից:

Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ
~~Առաջին ընթերցում~~

(Կ-874[1]-25.06.2024-ՊԱ-011/1)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 13-րդ հոդվածի 2-րդ պարբերության 1-ին նախադասությունում «123-131» թվերը փոխարինել «123-131.1» թվերով:

Հոդված 2. Օրենսգրքի 131-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ խմբագրությամբ 5.1-ին մասով.

«5.1. Ապրանքների առաքում իրականացնող հեծանիվ կամ մոպեդ վարող անձի կողմից հեծանիվը կամ մոպեդն առանց սաղավարտի կամ չկոճկված սաղավարտով վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթնապատիկի չափով:»,

2) 6-րդ մասում «առաջինից հինգերորդ» բառերը փոխարինել «1-5.1-ին» թվերով,

3) 6.1-ին մասում «1-5-րդ» թվերը փոխարինել «1-5.1-ին» թվերով:

Հոդված 3. Օրենսգրքի 10-րդ գլուխը լրացնել նոր 131.1-ին հոդվածով հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 131.1. Անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների երթևեկությանը ներկայացվող պահանջները խախտելը**

1. Անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների երթևեկությանը ներկայացվող պահանջները (կանոնները) խախտելը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված դեպքերի՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

2. Ապրանքների առաքում իրականացնող անձանց կողմից անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցն օգտագործելն առանց սաղավարտի կամ չկոճկված սաղավարտով՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթնապատիկի չափով:

3. Անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցները վարձակալությամբ տրամադրելու գործառույթ իրականացնող կազմակերպությունների (անձանց) և ֆիզիկական անձանց կողմից «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 24.4-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված պահանջը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ կազմակերպությունների (անձանց) նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանինապատիկի չափով, իսկ ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

4. Անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցով ուղևոր կամ բեռ տեղափոխելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

5. Անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցով այլ անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոց կամ միջոցներ տեղափոխելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ կազմակերպությունների (անձանց) նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանինապատիկի չափով, իսկ ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

Հոդված 4. Օրենսգրքի 264-րդ հոդվածի 4-րդ մասում «173» թվից առաջ լրացնել «131.1-ին հոդվածի 3-րդ մասով,» բառերը, իսկ նույն մասի «մինչև գործի քննությունը վերցնել» բառերից հետո լրացնել «անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցը,» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին, 287-րդ հոդվածի 2-րդ, 302-րդ հոդվածի 1-ին, 305-րդ հոդվածի 2-րդ և 307-րդ հոդվածի 3-րդ մասերում «131» թվից հետո համապատասխան գրելաձևով լրացնել «131.1» թիվը:

Հոդված 6. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ ամիս հետո, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածով լրացվող 131.1-ին հոդվածի 3-րդ մասի:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածով լրացվող 131.1-ին հոդվածի 3-րդ մասն ուժի մեջ է մտնում 2025 թվականի սեպտեմբերի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-874-25.06.2024-ՊԱ-011/1) ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-874[1]-25.06.2024-ՊԱ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Օրենքի 2-րդ հոդվածը բաղկացած է բազմաթիվ պարբերություններից, առաջարկվում է հստակեցնել վերոնշյալ դրույթի հղումը և նշել, թե Օրենքի 2-րդ հոդվածում կոնկրետ որտեղ է լրացվում Նախագծի 1-ին հոդվածով նշված նախադասությունը: Ըստ այդմ, առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. **«Հոդված 1.** «Ճանապարհային երթևեկության անվտանգության	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			ապահովման մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում «արգելվում է» բառերից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով, որից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն. **անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոց**՝ մեկ կամ մի քանի անիվ (գլանափող) ունեցող տրանսպորտային միջոց, որը նախատեսված է էլեկտրական շարժիչի օգտագործմամբ մարդու անհատական տեղաշարժման համար (էլեկտրական սկուտեր, էլեկտրական սքեյթբորդ, գիրոսկուտեր, սեգվեյ, միանիվ և այլ նմանատիպ միջոցներ)։»:		
2.	ՀՀ կառավարություն	«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի	Դրույթի իմաստային ամբողջականությունն ապահովելու համար՝ առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 24.4.-րդ հոդվածի 7-րդ մասի 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. «11)անհատական շարժունակության	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

		3-րդ հոդված	(տեղաշարժման) միջոցը վարել թունելներում»:»		
3.	**ՀՀ կառավարություն**	**«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 8-րդ մաս**	**Եվրոպական միության երկրների շրջանում (Մալթա՝ 20կմ/ժ, Լյուքսեմբուրգ՝ 25 կմ/ժ, Լիտվա՝ 25 կմ/ժ, Ավստրիա՝ 25 կմ/ժ, Ֆինլանդիա՝ 25 կմ/ժ, Գերմանիա՝ 20 կմ/ժ, Իտալիա՝ 30 կմ/ժ, Նիդերլանդներ՝ 25 կմ/ժ) ինքնագլորների առավելագույն արագությունը տատանվում է 20-30 կմ/ժ-ի միջակայքում, մինչդեռ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 8-րդ մասով, որպես արագության առավելագույն սահմանափակում, նախատեսված է 20 կմ/ժ-ը: Ըստ այդմ, հիմք ընդունելով եվրոպական երկրների փորձը, առաջարկվում է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ և 8-րդ մասերում**	**Ընդունվել է:** **Կատարվել է համապատասխան փոփոխությունը:**	Ընդունվել է:

			«20» թիվը փոխարինել «25» թվով:		
4.	ՀՀ կառավարություն	«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված, 1-ին և 2-րդ մասեր	Նախագծի 4-րդ հոդվածում առաջարկում ենք շտկել դրանով կատարվող հղումները, որոնք կատարվում են Նախագծի 3-րդ հոդվածի 9-րդ մասին՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծի 3-րդ հոդվածը չունի 9-րդ մաս, իսկ 9-րդ մաս ունի այդ հոդվածով Օրենքում լրացվող 24.4-րդ հոդվածը: Այս դիտարկումը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջից:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդված, 1-ին և 2-րդ մասեր	Առաջարկում ենք նախագծի 6-րդ հոդվածում շտկել դրանով կատարվող հղումները, որոնք կատարվում են նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասին՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նախագծի 3-րդ հոդվածը չունի 3-րդ մաս, այլ՝ 3-րդ մաս ունի այդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 131.1-ին հոդվածը: Այս դիտարկումը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջից:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է: